# ԿԱՏԱՐՎԵՑ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԴԱՐԱՎՈՐ ԻՂՁԸ

Մոտ մեկ ու կես միլիոն հայ աշխատավորներ, կտրված հայրենի հողից, ցրված են աշխարհով մեկ։ Կրելով անսահման տառապանքներ, նրանք ենթակա են հալածանքի ու ոչնչացման։ Իրենց փրկության մասին բազում տարիների ընթացքում նրանք շատ խոստումներ են լսել, շատ-շատերն են իրենց հայտարարել նրանց «պաշտպանը»։ Բայց հայ պանդուխտները, որոնց տառապանքի լուծը գնալով ավելի ու ավելի է ծանրացել, լավ գիտեն այդ խոստումների արժեքը և լավ են ճանաչել իրենց այդ «պաշտպաններին»։

Եվ աշխարհի որ ծայրում էլ գտնըվելիս լինեին, նրանք իրենց հայացքն ուղղել են դեպի Սովետական մեծ Միությունը, դեպի մայր հայրենիքը, անհուն հավատով սպասել են մեծ Ստալինի փրկարար խոսքին։ Եվ մեծ առաջնորդն ասաց իր խոսքը։ Նրա անմիջական ցուցումով սովետական կառավարությունը որոշում ընդունեց արտասահմանից հայերի Սովետական Հայաստան վերադառնալու կապակցությամբ ձեռնարկվող միջոցառումների մասին։ Փրկության ճանապարհը բաց անող այդ լուրը արևի ջերմացնող ճառագայթների նման տարածվեց աշխարհով մեկ։ Ամենուրեք հայ պանդուխտը ուղղեց տասնյակ տարիներ կուտակված մեջքը։ Տասնյակ-հազարներ դեն շպրտեցին պանդխտության ցուպը և ճանապարհ ելան դեպի Հայրենիք։

Հայրենիքը գրկաբաց ընդունեց իր տառապյալ զավակներին։ 1946 թվին Հայաստան վերադարձան մի քանի տասնյակ հազար մարդ։ Նրանք բոլորն էլ ստացան օթևան և աշխատանք, ստացան լիարժեք մարդ կոչվելու իրավունք, դարձան սովետական քաղաքացիներ։ Աշխատանքի կարոտ բանվորը կանգնեց դաշտահի մոտ, իր քրտինքի պտուղը երբեք չվայելած ռանչպարը միացավ կոլխոզային ամենակարող կարգերին։

Հալածված բանաստեղծը ամբողջ սրտով գովերգեց մայր Հայրենիքը, կարիքից թափառաշրջիկ դարձած երաժիշտը շրջապատվեց ընկերական ջերմ մթնոլորտով, ամբողջ կյանքում բեմի մասին երազող երգչուհին առաջնակարգ օպերային թատրոնի բեմից երգեց մայրենի չքնաղ մեղեդին։ Ուսման ծարավի երիտասարդությունը դիմեց դեպի դպրոց ու համալսարան։ Բարձրագույն ուսումնական հաստատություններն ընդունվեցին հարյուրավոր երիտասարդներ, 6.000 երեխաներ սկսեցին դպրոց հաճախել. նրանք այլևս չեն մոռանա մայրենի լեզուն։ Նորից գործել սկսեցին ավելի քան տաս տարի առաջ իրենց դերն ավարտած անգրագիտության վերացման դպրոցները, որտեղ նորեկ հազարավոր անգրագետներ սովորում են մայրենի լեզուն։

2.400 ընտանիք ձեռնարկեցին մայր հողի վրա իրենց սեփական հարկը կառուցել, դրա համար պետությունը նրանց տվել է ավելի քան 35 միլիոն ռուբլի վարկ։

Ահա թե ինչու հալածանքներից ու կործանումից փրկված այս տասնյակ հազարավոր հայ աշխատավորները այսօր միաբերան ասում են,— շնորհակալություն քեզ, մեր իմաստուն առաջնորդ, մեր ազատարար, մեծ Ստալին։